Գլխաքանակը

Հայաստանի հարավային շրջաններում այսօր 10-15-ից ոչ ավելի հովազ է մնացել: Գրանցվել է ՀՀ և միջազգային կարմիր գրքերում: Պահպանվում է Խոսրովի և Շիկահողի պետական արգելոցներում:

Հովազը հյուսիսային Հայաստանից անհետացել է 1970 թ-ից:

Սահմանափակող գործոնները

Հայաստանում հովազի թշնամին միայն մարդն է: Հիմնական վտանգը՝ որսագողությունն է: Անհանդուրժողական վերաբերմունք է նկատվում գայլերի և ընձառյուծների միջև:

Օգտակարությունը

Հովազը ոչնչացնում է հիվանդ և թույլ կենդանիներին: Հայտնի է, որ գիշատչի և զոհի փոխհարաբերությունը կենդանական աշխարհի էվոլյուցիոն զարգացման կարևորագույն գործոններից մեկն է: Օրինակ, պարսկական Կեբադան կղզում ասիական մուֆլոններն այնքան էին բազմացել, որ վտանգվել էր բուսականության վիճակը կղզում: Սակայն հովազի վերակլիմայավարժեցումից հետո կրճատվել է մուֆլոնների քանակը, և բարելավվել է բուսականության վիճակը:

Սույն հրատարակությունը իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ կողմից Նորվեգիայի Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) ֆինանսական աջակցությամբ:

ՀՀ, Երևան, 0019
Բաղրամյան պող., 24դ, 609 սենյակ
հեռ. / ֆաքս. (+37410) 523604
էլ. փոստ: office@awhhe.am

Առաջավորասիական ընձառյուծ կամ հովազ (Panthera pardus)

Լուսանկարը՝ Ի. Խորոզյանի, Ա. Մալխասյանի, Մ. Բոյաջյանի

Երևան 2008

Անվանում են ինձ կամ ընձառյուծ:

Բնակության արեալը

Տարածված են Մեղրու, Արարատի տարածաշրջանների միջև ընկած հատվածում: Բնակվում է հատկապես ժայռոտ տեղանքներում, նոսր անտառներում և լեռնային չոր տափաստաններում:

Արտաքին նկարագիրը

Մարմնի երկարությունը 107 – 160 սմ է, երբեմն այն հասնում է 180 սմ – ի, պոչինը՝ 75 – 110, բարձրությունը 50 – 75 սմ է, քաշը՝ 32 – 40 կգ և ավելի, արուների քաշը կարող է հասնել 90 կգ:

Մարմինը համաչափ է, գեղակազմ, ոտքերն ամուր են, թաթերը՝ լայն, սուր ճանկերով: Ականջները կարճ են ու կլոր: Մեջքի գունավորումը դեղին է կամ դեղնակարմրավուն՝ մոխրագույն երանգով: Այդ ֆոնի վրա համատարած ցրված են վարդանախշաձև, սև բծեր:

Կենսակերպը և տնտեսական նշանակությունը

Հովազները մեծ վարպետությամբ մագլցում են ծառեր և այնտեղ իրենց զգում են՝ ինչպես գետնի վրա: Ծառերի վրա որսում են տարբեր կենդանիներ, դարանակալում են, թաքցնում իրենց որսը, հանգստանում ու քնում են այնտեղ:

Հովազը զգույշ և համարձակ կենդանի է, մարդուն հանդիպելիս անմիջապես չի փախչում, նույնիսկ, կրակոցից հետո հեռանում է դանդաղ, չշտապելով:

Հիմնական կերը վայրի սմբակավոր կենդանիներն են՝ մացառախոզեր, բեզոարյան այծը, այծյամը, վայրի խոզը: Որսում է նաև նապաստակներ, կաքավներ, նույնիսկ գորտեր ու մկնակերպ կրծողներ: Ընտանի կենդանիների վրա հարձակվում է կերի խիստ պակասի դեպքում:

Որսում է նաև գորշուկին, ձմռանը հանելով նրան բնից: Որսը կատարում է երկու եղանակով՝ գաղտագողի ու դարանակալելով: Առաջին դեպքում նրանք մոտենում են զոհին զգույշ՝ դիտելով ու լսելով շրջապատը, սողալով հպվելով գետնին այնպիսի հմտությամբ, որ նրան նկատել հնարավոր չէ, մանավանդ աշնանը, երբ շրջապատի բնության գույնը համընկնում է նրա մորթու գույնին: Եթե խոտի բարձրությունը հասնում է 50 սմ-ի, ապա հովազը մնում է աննկատ: Երբ երկու կենդանիների միջև տարածությունը կրճատվում է ու մնում մի քանի տասնյակ մետր, գիշատիչը վեր է թռչում տեղից ու նետվում դեպի զոհը: Նրա ցատկերի մեծությունը հասնում է 7 – 8 մ – ի: Այծյամը հովազի հարձակումից շփոթվում է ու հասցնում 4 – 5 մ թռիչք կատարել:

Եթե հարձակումն անհաջող է, հովազը մեծ մասամբ չի հետապնդում փախչող կենդանուն, իսկ երբեմն հետապնդում է ու կարճ տարածությունում բռնում նրան: Երկրորդ դեպքում դարանակալում է հիմնականում ջրի մոտակայքում, աղբակույտերի մոտ կամ էլ կենդանիների շավիղներում ու հարձակվում անցնող կենդանիների վրա:

Հովազը փոքրիկ կենդանիներին սատկացնում է թաթի հարվածով, իսկ մեծերին նախ վայր է գցում՝ թռչելով նրանց վրա: Որոշ դեպքերում հետապնդվող կենդանուն վայր է գցում հոգնեցնելով՝ վազելով նրա ետևից 60 կմ/ժ արագությամբ: Տապալելով զոհին և խուսափելով նրա սմբակների ու եղջյուրների հարվածից, բռնում է կոկորդից ու խեղդում: Եթե կենդանին մնում է կանգնած, ապա գիշատիչը բռնում է նրա ծոծրակից: Վայրի խոզեր որսում են հատկապես փորձված հովազները, անփորձները կարող են ստանալ ծանր վնասվածքներ վայրի խոզերի սուր ու մեծ ժանիքների պատճառով:

Լուսանկարը՝ Ի. Խորոզյանի, Ա. Մալխասյանի, Մ. Բոյաջյանի

Հովազները որսի են դուրս գալիս միայնակ, երբեմն՝ մայրը ձագերի հետ: Կուշտ լինելու դեպքում խաղում են որսի հետ: Հովազներն աչքի են ընկնում մեծ ուժով: Նրանք կարող են բարձրացնել ծառի անճյուղ բնի վրայով մինչև 45 կգ քաշ ունեցող կենդանուն:

Հովազն ունի լավ լսողություն և սուր տեսողություն: Լավ է տեսնում նաև գիշերը: Հիմնականում որսի է դուրս գալիս գիշերվա առաջին կեսին և լուսաբացից առաջ: Ցերեկը թաքնվում է: Հոտառությունը թույլ է զարգացած, այդ պատճառով ավելի փորձառու հովազները որսի ժամանակ նկատի են առնում քամու ուղղությունը, իսկ երիտասարդները հաշվի չառնելով այն՝ տուժում են:

Հովազը լռակյաց կենդանի է: Յուրաքանչյուր անհատ ունի իր որսի որոշակի տարածքը: Երբեմն մի քանի հովազ օգտվում է միևնույն շրջանից: Առհասարակ միմյանց հանդիպելիս նրանց միջև տեղի է ունենում պայքար, որի ընթացքում մենամարտող կողմերը ստանում են լուրջ վնասվածքներ: Հովազներն իրենց զբաղեցրած տեղանքից հեռանում են խիստ ծմեռներին, կերի պակասության և անթրոպոգեն տարբեր գործոնների պատճառով: Հովազներն իրենց որջը պատրաստում են քարանձավներում, ժայռերի ճեղքերում, հաստ ծառերի փչակներում:

Ցուրտ օրերին հովազները սիրում են տաքանալ արևի տակ՝ պառկելով մերկ քարերին ու ծառի ճյուղերին:

Անցյալում հովազին որսացել են նրա մորթու համար:

Հովազների կյանքի տևողությունը 21 տարի է:

Բազմացումը

Սարերում հովազի՝ մի քանի կիլոմետր տարածվող ձայնը կարելի է լսել նրա բազմացման սեզոնում (աշնան վերջ-ձմռան սկիզբ)՝ գիշերները: Էգերին տիրելու նպատակով, արուներն հաճախ հեռանում են իրենց որսի շրջաններից և տեղափոխվում էգի տարածքները: Արուների միջև հաճախ պայքար է գնում էգի համար: Բեղմնավորումը տեղի է ունենում հունվար ամսին և տևում 12 – 25 օր: Հղիությունը տևում է 90 – 105 օր:

Ծնից առաջ մայրն առանձնանում է, չոր տերևներից ու խոտերից որջում պատրաստում է ցամքար /անկողին/, երբեմն էլ ծինը տեղի է ունենում փխրեցրած հողի վրա: Ունենում է 1 – 3, սովորաբար՝ 2 ձագ, որոնք կաթով կերակրվում են 3 ամիս, իսկ երբեմն էլ մինչև 6 – 8 ամսեկան հասակը: Երկու ամսեկանում ձագերը դուրս են գալիս որջից և խաղում շրջակայքում: Նրանք որսում են մորեխներ, գորտեր: Մեկ տարեկան հովազները որսի են դուրս գալիս մոր հետ: Մեկուկես տարեկանում ձագերը հեռանում են մորից: Արու ձագերը սեռահասուն են դառնում 3 տարեկանում, իսկ էգերը՝ 2: